ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզ, գ. Արարատ
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N ___7___ «__23___» ____օգոստոսի___ 2016թ.

Օբյեկտ՝ Արարատ գյուղի մանկապարտեզի 3 մասնաշենքի վերակառուցում:
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

Վերակառուցման ենթակա է՝
մանկապարտեզի երրորդ մասնաշենքը 43.0x 9.0մ եզրային առանցքաչափերով Պ-ա ձև հատակագծով, որը 6 x 12մ եզրային առանցքաչափերով ուղղանկյուն հատակագծով երկհարկանի հատակագծով, երկհարկանի հատվածամասով կապված է հարակից մասնաշենքի հետ , հարկերի բարձրությունը -3.30 մ է:
Շենքի պարփակող պատերը իրականացված են հավաքովի երկաթ- բետոնե կախովի պանելներով, որոնք երեսապատված են տուֆաքարե սալիկներով: Կողային ճակատներում ե/բ պանելների փոխարեն իրականացված են կանոնավոր ձևի կտրվածքի տուֆաքարերի շարվածքով:
Ծածկերը ե.բ. հավաքովի անցքավոր սալերից: Տանիքը լանջավոր, ցինկապատ թիթեղից փայտե ծպեղներով ինքնաթափ ջրահեռացմամբ:

Մասնաշենքի վերակառուցման նախագծում նախատեսել նոր խոհանոցային մաս, ադմինիստրատիվ մաս, բժշկի սենյակ իր մեկուսարանով և 3-խմբակային բաժիններ:
Գոյություն ունեցող տարածքի, խաղահրապարակների և տաղավարների գոտիավորում, մանկապարտեզի նոր սահմանի մետաղական ցանկապատում, հին ե/բ հավաքովի ցանկապատի (պարիսպի) մասնակի հատվածի վերանորոգում:
Նոր ինժեներական ցանցերի նախագծում:
Հիմնականում պահպանել գոյություն ունեցող մանկապարտեզի հատակագծային լուծումները:
Ուժեղացումը իրականացնել համաձայն տեխ.եզրակացության:
Սենքերի պարտադիր կազմը և մոտավոր մակերեսները իրականացնել համաձայն գործող նորմերի:
Նախագիծը իրականացնել մեկ փուլով (աշխատանքային նախագիծ):
Նախագծման ժամանակ առաջնորդվել «Ցուցումներ նախագծային կազմակերպություններին» հավելվածում նշված հանձնարարականների:
(հակիրճ բնորոշումը, հզորությունը ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը՝ Արարատի մարզ, գ. Արարատ, Ռ. Վարդանյան փողոց. 1
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող՝ ՀՀ Տարածքային Զարգացման Հիմնադրամ
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը վկայականի համարը ____
կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը երկու (2) տարի
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.